ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«24» 08 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000065

Ձեռնարկողը՝ ***«ՍՎ Ջուր» ՍՊԸ***
Կոտայքի մարզ, գ.Նոր գեղի,
Առողջարանային փ. 4-րդ փակուղի

Գործունեությունը՝ ***Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000065

<<24>> 08 2020թ.

Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ՍՎ Ջուր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	/Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Արզնի համայնք

«ՍՎ Ջուր» ՍՊ ընկերությունը նախատեսում է Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից հանքային ջուր արդյունահանել արդյունաբերական՝ շշալցման նպատակով, 50 տարի ժամկետով:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի կիրճում, գետի ձախ ափին, Հանքավայրի մոտակայքից անցնում է բարեկարգ, ասֆալտապատ Երևան-Սևան մայրուղին:

Հանքավայրի տարածքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS 84 համակարգով.

x= 4464260 y= 8465250

x= 4464253 y= 8465148

Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքը գտնվում է Արզնի համայնքի վարչական սահմաններում: Հորատանցքի բացարձակ բարձրությունը կազմում է 1280.0մ:

Հանքավայրի հանքային ջրերը կապված են Հրազդան գետի հին հովտի էֆֆուզիվ ալյուվիալ կոմպլեքսի հետ: Հորատանցքի հանքային ջրի հիմնական արդյունաբերական միջակայքը, որը համապատասխանում է կոնդիցիայի պայմաններին, տեղակայված է 50.0-67.0մ խորության վրա, երկրաբանական կառուցվածքը ներկայացված է խարամով, հրաբխային ավազով, ճեղքավորված անդեզիտաբազալտներով:

Հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործումնական պաշարները 01.07.1966թ.-ի դրությամբ հաստատվել են 27.05.1967թ.-ին՝ նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 5164)

01.01.2002թ.-ի դրությամբ, երեք հորատանցքերով վերահաստատվել են ՀՀ օգտակար հանածոների պաշարների գործակալության (ՕՀՊԳ) կողմից 30.06.2003թ.-ին (արձանագրություն թիվ 12): Պաշարները կարող են օգտագործվել՝ շշալցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով: Հանքավայրի հանքային ջրի շահագործողական պաշարները կազմում են 19.14լ/վրկ կամ 1654.0մ³/օր, իսկ ազատ ածխաթթու գազի պաշարները՝ 4.5մ³/մ³ կամ 6.4գ/լ, որից, 6/64 հորատանցքով հանքային ջրի պաշարն ըստ B կարգի կազմում է 7.02լ/վրկ կամ 607.0 մ³/օր, իսկ ազատ ածխաթթու գազի պաշարներն ըստ B կարգի կազմում են՝ 0.3գ/լ կամ 0.2մ³/մ³: Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 0.5լ/վրկ կամ 15768.0մ³/տարի: Հանքային ջրից ազատ ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում, քանի որ այդ պաշարների ծավալը փոքր է: Ազատ ածխաթթու գազը ընկերությունը կգնի Լիճքի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրից:

Ներկայումս «Արզնի առողջարան» ՓԲԸ-ն հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից 0.23լ/վրկ կամ 7250.3մ³/տարի քանակությամբ հանքային ջրի արդյունահանումն իրականացնում է բուժական նպատակով:

Արզնիի հանքային ջրերը ածխաթթվային են (CO_2-97.0-99.8%), թույլ թթվային (pH-6.4-6.6): Թիվ 6/64 հորատանցքի ջրի ծախսը կազմում է 7.02 լ/վրկ, հանքայնացումը՝ 5.4-6.5գ/լ, ջերմաստիճանը՝ 16.4°C: Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակը չի գերազանցում թույլատրելի սահմանները: Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է և կարող է օգտագործվել շշալցման, բուժական և ազատ ածխաթթու գազի կորզման համար:

Նախատեսվող գործունեության տարածքը «Արզնի առողջարան» ՓԲԸ-ից գտնվում է մոտ 100.0մ հեռավորության վրա: Հանքավայրի շահագործման ու շշալցման համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում: Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ինժեներական ենթակառուցվածքներից /գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գիծ և կոյուղի/: «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերությունը հանքային ջրի շշալցման գործընթացը կիրականացնի «Արզնի առողջարան» ՓԲԸ հարակից տարածքում գտնվող շինությունում /որը նախկինում օգտագործվել է ընկերության կողմից/ որը օժանդակ շինությունների հետ միասին զբաղեցնում է 450մ² մակերես: Շշալցման արտադրամասն իր օժանդակ շինություններով առանձնացված է 3մ բարձրություն ունեցող քարե պատնեշով և ապահովված է տեխնիկական ջրով:

Շշալցման գործընթացը կկազմակերպվի առողջարանի տարածքում, թիվ 6/64 հորատանցքից՝ հանքային ջրի ըմպելասրահ տանող 2 դյույմանոց պոլիէթիլենային (խմելու որակի) խողովակաշարից, որտեղից ճյուղավորում կկատարվի դեպի հանքային ջրի շշալցման արտադրամաս և ըմպելասրահ: Հեռավորությունը ճյուղավորման տեղից մինչև շշալցման արտադրամաս կկազմի 70.0մ, իսկ ըմպելասրահ՝ 65.0մ: Հանքային ջրի շշալցման արտադրամասում նախատեսվում է տեղադրել շշալցման մեկ հոսքագիծ (պլաստիկ տարաներում շշալցման համար), որի արտադրողականությունը ժամում կկազմի 3000 հատ 1.0 լիտր տարողությամբ շիշ: Շշալցման արտադրամասը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով:

Գործունեությունն իրականացնելու համար «Արզնի Առողջարան» ՓԲԸ-ի կողմից տրվել է նախնական համաձայնություն՝ ըմպելասրահ տանող հանքային ջրի խողովակից օգտվելու և շշալցման գործունեությունը կատարելու համար:

Շահագործվող ջրհավաք հորատանցքը կահավորված է վերերկրյա կառույցով և հորատանցքի բերանի շուրջը իրականացվել է ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա՝ մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք բացառելու նպատակով: Հորատանցքի շուրջ կառուցված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի՝ հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով: Ընկերության կողմից հորատանցքը շահագործվելու է փակ ռեժիմով,

ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

գլխամասը և ջրագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է կահավորվեն համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ:

Պայմանավորված աշխատանքների բնույթով և տեսակներով, հանքային ջրի արդյունահանման իրականացմամբ /նախապատրաստական և շահագործման փուլեր/ լանդշաֆտի ամբողջականության, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության և մթնոլորտային օդի վրա զգալի ազդեցություններ չեն նախատեսվում: Գործունեության իրականացումը չի ուղեկցվում արտադրական և ընդերքօգտագործման թափոնների, ինչպես նաև արտադրական հոսքաջրերի առաջացմամբ:

Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի արդյունավետ և պատշաճ շահագործման համար «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊԸ կողմից **նախատեսվում է իրականացնել հետևյա աշխատանքները**.

– ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով՝ բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար,

– ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը իրականացնել հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին համապատասխան,

– իրականացնել հիդրոերկրաբանական ռեժիմային սիստեմատիկ ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ,

– ջրհավաք հորատանցքի գլխամասի կահավորում համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ:

Հանքավայրի շահագործման ու հանքային ջրի շշալցման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը կարող է պայմանավորված լինել տեխնածին ազդեցությունով, կամ արտակարգ իրավիճակներով: Այդ ռիսկը նվազագույնի հասցնելու և շահագործման աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է հանքային ջրերի շահագործմանը զուգահեռ իրականացնել հորատանցքի շահագործման ռեժիմի, ջրի որակական, քանակական բնութագրերի և տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ՝ ջուրը աղտոտումից, սպառումից և տեխնածին վնասակար ազդեցությունից զերծ պահելու նպատակով: Նախատեսված է նաև ջրի ծախսի, ջերմաստիճանի, ճնշման (մակարդակի) և հողի մշտադիտարկումներ (մոնիթորինգ), ինչպես նաև ջրի նմուշարկումներ և լաբորատոր հետազոտություններ՝ կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները, ինչպես նաև գնահատելու հանքավայրում քանակական և որակական փոփոխությունները որոշելու համար: Նշված միջոցառումներն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր տարի նախատեսվում է ծախսել 700.000 դրամ, իսկ խախտված տարածքների վերականգնման նպատակով նախատեսվում է ծախսել 200.000 դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացին մասնակցել է առողջապահության նախարարությունը, Կոտայքի մարզպետարանը: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հաշվետվությունը լրամշակվել է: Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի

Արզնի համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Նախատեսվող աշխատանքների բնույթով և տեսակներով պայմանավորված՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հանքային ջրի արդյունահանման բացասական ազդեցությունը նվազագույն է: Նախատեսվող գործունեությունը չի ուղեկցվում արտադրական և ընդերքօգտագործման թափոնների առաջացմամբ, մթնոլորտային արտանետումներով, ինչպես նաև վտանգավոր արտահոսքերով:

Նախատեսվող գործունեության իրականացումը կապահովվի շուկայի պահանջարկը, իսկ Արզնի համայնքում կստեղծվեն աշխատատեղեր, ինչն էլ կնպաստի բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը և կենսամակարդակի բարձրացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ընթացքում առաջնորդվել առողջապահության նախարարի «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների եվ ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N2-III-Ա2-2 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» 2002թ. նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանի և կառավարության «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի 1480-Ն որոշման պահանջներով:

2. Հաստատված պաշարների քանակին, որակին և ռեժիմին համապատասխան հանքային ջրի արդյունահանումն իրականացնելու նպատակով, անհրաժեշտ է ըստ ժամանակացույցի ապահովել հորատանցքի շահագործման ռեժիմի ու տեխնիկական վիճակի և ջրի ծախսի, ջերմաստիճանի և այլ պարամետրերի նկատմամբ մշտադիտարկումներ և նմուշարկումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՍՎ Ջուր» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ Գ. Գևորգյան

Մասնագետ Հ. Ալեքսանյան